ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1322-Ա «11» ապրիլի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի Հ.304-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, Գ.ՀԱՍՐԱԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.25/11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հ.ՊՆ/510/4228-22 գրությունը՝ Աջափնյակ վարչական շրջանի, Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 4.5658հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2022 թվականի հուլիսի 20-ի հ.20072022-01-0002 վկայականը, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2025 թվականի հունվարի 13-ի հ.ԱՍ/22.1/872-2025, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2025 թվականի հունվարի 20-ի հ.03/25.3/290-2025 գրությունները:

Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն քննարկվող 4.5658հա մակերեսով հողամասը գտնվում է հատուկ նշանակության տարածքների գոտում և ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի 7-րդ գոտում:

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.304-Ա որոշմամբ՝ Աջափնյակ վարչական շրջանի, Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 4.5658հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրվել է «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 7-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով, ՀՀ կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ, հաշվի առնելով Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2025 թվականի հունվարի 23-ի հ.1936-25, 2024 թվականի հոկտեմբերի 8-ի հ.Ն/58623-24, 2023 թվականի ապրիլի 25-ի հ.13353-23 եզրակացությունները.

1. Աջափնյակ վարչական շրջանի, Գ.Հասրաթյան փողոցի հ.25/11 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող 4.5658հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մարտի 18-ի հ.304-Ա որոշման համապատասխան, սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի կառուցապատման:

2. Հողամասի նկատմամբ փոփոխված նպատակային և գործառնական նշանակությամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

3. Ընդունել ի գիտություն, որ.

1) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի 2025 թվականի հունվարի 20-ի հ.03/25.3/290-2025 գրության համաձայն քննարկվող հողամասի տարածքով անցնում է տարածքի շենքերը սնուցող վերգետնյա գազատար ինչի պարագայում անհրաժեշտ է պահպանել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի հ.539-Ն որոշմամբ հաստատված «Գազաբաշխման համակարգի անվտանգության և շահագործման կանոնները հաստատելու մասին» տեխնիկական կանոնակարգի նորմերը կամ խոչընդոտ հանդիսանալու դեպքում տարածքում շինարարական աշխատանքներ իրականացնելուց առաջ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններ»-ի 2-րդ բաժնի 4-րդ գլխի թիվ 36 կետի համաձայն՝ իրականացնել նշված տարածքում առկա գործող գազատարի վերատեղադրում հողամասի սեփականատիրոջ կամ նախաձեռնողի միջոցներով, նախապես Երևանի ԳԳ մասնաճյուղից տեխնիկական պայմաններ ստանալու դեպքում.

2) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2025 թվականի հունվարի 13-ի հ.ԱՍ/22.1/872-2025 գրության համաձայն քննարկվող հողամասով անցնում են ենթակայանը սնող մալուխներ, ինչի պարագայում տարածքում շինարարական աշխատանքներ իրականացնելուց առաջ անհրաժեշտ է լուծել ՏԵ 7779 ենթակայանը սնող 6կվ լարման մալուխային գծի, Գ.Հասրաթյան փողոցի հ.19 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքի և դեպի Գ.Հասրաթյան փողոց գնացող 0.4կվ լարման օդային գծերի հարցը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

6. Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ